

ընկերության ոգով հաղեցված «Ճնշողուկի կտուցի շափ» փոքր, բայց սրտեր թափանցող և հոգիներ փոթորկող ստեղծագործություններ»²։

Մի երկու դիտողություն։ Մեր կարծիքով, գիրքը է՛լ ավելի կշահեր, եթե հեղինակը, փոխանակ ժլատ մի երկու դիտարկումի, ավելի հանդամանորեն անդրադառնար նորավեպի տեսությանը և այդ հիման վրա, ավելի հստակ կերպով բացահայտեր Բաշալյանի նորավեպերի և պատմվածքների տարբերությունը։

Գրականագետը հետաքրքրական մի հարց է դնում, սակայն այդ հարցին հպանցիկ ձևով է մոտենում։ Խոսքը վերաբերում է Բաշալյանի գրականությանը քիչ զբաղվելու հարցին։ Նա բերում է Ա. Չոպանյանի կարծիքը, որ իբր Բաշալյանը եղել է «ծուլ» կամ գրական ասպարեզը լքող, «դասալիք»։ Սա թվում է, թե այնքան էլ ճիշտ չէ։ Դրա համար, թերևս եղել են ավելի խոր հասարակական և հոգեբանական պատճառներ, որոնց անդրադառնալը ցանկալի կլիներ։

Լ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ս/թ սեպտեմբերի 30-ին Մասկվայում Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում կայացավ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված դիտական նստաշրջան, որը հրավիրել էին ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի, Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության և Հայկական ՍՍՀ դիտությունների ակադեմիայի Մանուկ Արեղյանի անվան գրականության ինստիտուտները։

ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Լ. Սուլկովի ներածական խոսքից հետո, հանդես եկավ զրոգ Նիկոլայ Տիխոնովը, որն իր ելույթն ավարտեց Թումանյանին նվիրված նոր բանաստեղծությամբ։

Նստաշրջանին ակտիվ մասնակցություն ունեցավ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը։ Մեծ ուշադրությամբ լսվեցին գրականագետներ էդ. Ջրրաշյանի՝ «Թումանյանի ռեալիզմը», Սուրեն Աղաբաբյանի՝ «Թումանյանը և արդիականությունը», Խ. Սարգսյանի՝ «Աշխարհն ու մարդը Թումանյանի ստեղծագործության մեջ», Արամ Ինճիկյանի՝ «Թումանյանը և Շեքսպիրը» բազմաբովանդակ զեկուցումները։

Նստաշրջանում ուշադրավ զեկուցումներով հանդես եկան նաև Թումանյանի հնօրյա թարգմանիչ Ս. Շերվինսկին, վրաց գրականագետ Գ. Ցիցիշվիլին, ղոկտորներ Լ. Հախվերդյանը, Ա. Դիմշիցը, թեկնածուներ Մարգարիտ Աթաբեկյանն ու Իրմա Սաֆրազբեկյանը։

² Նույն տեղում, էջ 238։